ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մտնելով նոր տարեայ շէմքը, Եւրոպան ոչ մի կերպ չի կարող պարծենալ թէ վճռած լինի մեացած տարիներից ժառանգած որ և է միջազգային քաղաքական ծանր խրդիր, և մնում լինի նոր տարին՝ պայծառ յոյսերով։ Քաղաքական մթնոլորդը չափազանց ծանր է. քաղաքականի հետ միասին այս անգամ մանաւանդ բարոյական կեանքն է որ մթնաղնել է երկինքը։ Ֆրանսիայում յանկարծ երևան եկաւ Պանամայի խնդիրը, որը այնքան խոշոր է, որ երկրորդական դարձրեց ամեն այլ քաղաքական խնդիր։ Պանամայի սկանդալը, որի բացառիկ խոշորութիւնը հարկ դրեց «Մուրճ»-ի վերայ իւր ընթերցողներին յընթացիկս պահել գործի բոլոր մանրամասնութիւններին, այդ սկանդալը, ասում ենք, բարոյական սկանդալ է, որը բնորոշում է ոչ այնքան Ֆրանսիայի կառավարչութեան ձևը, ոչ թէ հանրապետութիւնը, այլ ժամանակակից բարձր հասարակութիւնը առհասարակ։ Եւ զարմանալի երևոյթ. նոյն այն ժամանակ, երբ ամբողջ Ֆրանսիան կլանուած էր Պանամայի դեռ ևս այժմ էլ չը վերջացած խնդրով, Իտալիայում սկսուեցին նման մերկացումներ՝ կաշառակերութեան և հասարակաց վարկի հարստահարութեան, որի մէջ խառն են բանկերի կառավարիչներ, պարլամէնտի անդամներ և կառավարչական մարդիկ։

Նման գործ սպառնաց նաև Գերմանիային, ուր սոցիալիստական Vorwärts լրագիրը, ապա և ուրիշ թերթեր բացարին զաղտնիքներ «Վերլինեան ֆոնդ» կոչուած մեծաքանակ գումարների մասին, որոնցից պէտք է օգտուած լինեն, թէև դեռ չը յայտնուած, բայց իբր հասարակութեան և կառավարութեան մէջ բարձր դիրք ունեցող հարիւրաւոր անձեր։

Այն թանձր քօղը, որ կատարուած մերկացումները սփռեցին Եւրոպայի առաջնակարգ և լուսաւորուած երկիրների բարձր հասա-

բակութեան վերայ, այնքան ծանր ներգործութիւն արաւ ամբողջ աշխարհքի վերայ, որ քաղաքականութիւնը մի առժամանակ տիպուած պէտք է լռէր։ Բայց Ֆրանսիայում Պանամայի սկանդալը յարուցեց նաև քաղաքական խնդիրներ, որովհետև կուսակցութիւնների բարոյականութիւնը միշտ մեծ դեր է կատարել այդ երկրի կառավարչական սիստեմների վերայ։ Պարզ է որ Ֆրանսիայում իսկոյն նորից արթնացան միապետականների յոյսերը՝ հանրապետականների խայտառակութեան վերայ կանգնեցնել իրանց դրօշակները։ Պարլամէնտական ընտրութիւնների ժամանակը մօտ լինելով՝ բնական է թէ որքան ոյժ պիտի տանայ հին կռիւը հանրապետականների և միապետականների մէջ։

Հանրապետական կուսակցութիւնը առայժմ պէտք է թուլանայ նրանով, որ գործի մէջ խառը պատգամաւորները այլ ևս չը պիտի կարողանան վերընտրուել. կ՚ընտրի ազգը նոցա տեղը միապետականներին թէ ոչ և կասկածի տակ կը դցի ամբողջ հանրապետական կուսակցութիւնը թէ ոչ,—ահա խնդիրը։

Բայց դա մի խնդիր է միայն միապետականների համար. որովհետև ֆրանսիական գործերին հետամուտ մարդը չի կարող ըստ օրէն խնդիր դնել հանրապետութեան գոյութեան և չը գոյութեան մասին։ Պանամայի գործը թէև շատ ծանր գործ է, բայց նա միայնակ բաւական չէ հանրապետութիւնը տապալելու համար։ Դա մի գործ է, որ պատիւ չի բերում Ֆրանսիային և Եւրոպային առհասարակ, բայց դա մի գործ չէ, որ կարող լինէր պատահել միմիայն հանրապետութեան շնորհիւ։ Իտալիայի օրինակը—ահա մի շօշափելի ապացոյց։

Պանամայի գործը, որ տագնապի մէջ է պահում Ֆրանսիային, տագնապ գցեց նա և կառավարութեան մէջ։ Լուբէ՝ ի մինիստրութեան, որի մէջ նաև Լուբէն, Ֆրէյսինէն, Ռուլինէն բայց Ռիբոի մինիստրութիւնը ինքը, առանց արտաքին ճնշման, վերափոխուեց այնպէս, որ Լուբէն, Ռուլինէն և Ֆրէյսինէն հեռացան տեղտալով նոր մարդկանց։ Ռիբոի վերայ ներկայումս ծանրացած է մի վերին ատիճանի պատասխանատու պաշտօն, հանրապետութիւնը պաշտպանել ներքին թշնամիներից և պատրաստել մօտագայ ընդհանուր ընտրութիւնները պարլամէնտի համար։

Ներկայումս Ֆրանսիական մինիստրութեան մէջ են՝ Ռիբօ, մինիստր նախագահ և ներքին գործերի մինիստր (առաջ նա էր արտաքին գործերի մինիստր). Դէլեվ արտաքին գործերի, գեներալ Լուազիլիոն պատերազմական մինիստր, Բուրժուա՝ հանրական կրթութեան և այլն։

Ֆրէյսինէի հեռանալը կարևորագոյն փոփոխութիւնն է այդ բոլորի մէջ, և ամենից ցաւալին։

Կարևոր փոփոխութիւն կատարուեց նաև երեսփոխանական ժողովում, ուր ներկայ հանրապետութեան կարևորագոյն անձերից մէկը, Շարլ Ֆլոքէն, հեռացաւ ժողովի նախագահի պաշտօնից, որ պաշտօնում ընտրուեց նոյնպէս կարևոր պետական անձ՝ Կազիմիր Պերիէ։

Ընդհանուր քաղաքական դրութիւնը, որ ինչ վերաբերում է պետութիւնների քաղաքական համախմբումներին, ոչ մի կերպ չի փոխփոխուել։ Առաջուայ պէս եռապետական դաշնակցութեան դիմաց՝ կանգնած է Ռուսիայի և Ֆրանսիայի բարեկամութիւնը, որը Պանամայի գործի աղմուկով չը վնասուեց։ Դորա փորձը տուեց Եգիպտոսում կատարուած նոր եղելութիւնների առիթով։ Եգիպտոսի նոր խեդիւը՝ Աբբաս փաշա, ուզեց անգլիացիների ճնշումից ազատուել, մի մինիստրութիւն կազմելով իւր բացարձակ իրաւունքով։ Բայց քսանուչորս ժամուայ ընթացքում հարկադրուեց յետս կոչել իւր որոշումը և նոր մինիստրութիւն կազմակերպել՝ աւելի համապատասխան Անգլիայի հայեացքներին։ Բայց այդ գործում Անգլիան միայն ձևականապէս գործը տարաւ, որովհետև նոր մինիստրութիւնը այնուամենայնիւ ըստ ամենայնի չի վայելում Անգլիայի վստահութիւնը։ Միւս կողմից Եգիպտոսում սկսեցին աղմկալի ցոյցեր անգլիացիների դէմ, ցոյցեր, որոնք հարկ դրեցին Անգլիայի վերայ զօրեզացնել իւր զօրքը Եգիպտոսում։ Առ այժմ գործը աւելի հեռուն չի գնացած, բայց բնորոշ է որ այդ առիթով յամառ կերպով պահպանուում է այն լուրը, իբր Թիւրքիայի, Ռուսիայի և Ֆրանսիայի միջև բանակցութիւն է եղած՝ Եգիպտոսի գործերի համար միջազգային կոնֆերենցիա հրաւիրելու մասին։

Լորդ Ռոզբերին շտապեց հաւատեացնելու, որ Անգլիան որ և է փոփոխութիւն Եգիպտոսում առաջացնել մտադիր չէ։

Բուլղարիայում առաջին մինիստր Ստամբուլով պատրաստում է երկրի սահմանադրութեան վերաքննութեան գործը, որով իմիջի այլոց պէտք է թոյլ տրւի գահաժառանգներին ոչ ուղղափառ կրօնի դաւանութիւնը։ Դորա դէմ բողոք յարուցեց սուլթանին բուլգարական էկզարխը. սուլթանը, սակայն, առարկել է որ դա՝ ներքին բուլղարական խնդիր է, հետևապէս կուսակիցների որ և է կողմը պահելու մտադիր չէ։ Հաստատ կարելի է ասել, որ Բուլղարիան յուզող այդ նոր խնդիրը այնպէս էլ կը մնայ ներքին խնդիր և տեղիք չը պիտի տայ որ և է միջամտութեան ում և է կողմից։

Z.

Այս տողերը գրելուց յետոյ հեռագիրը բերաւ մի նշանաւոր լուր։ Փետրուարի 2-ին Գլադստոնը ներկայացրեց համայնքների ժողովին օրինագիծը իրլանդական ինքնավարութեան համար։ Բիլլի նպատակն է՝ օրէնք սահմանել յատկապէս իրլանդական գործերի համար։ Իրլանդիան պէտք է ունենայ իւր պարլամէնտը, բաժանուած՝ վերին և ստորին ժողովների. վերինը կ՝ունենայ 48 անդամ, ստորինը 103. վերին ժողովի անդամները ընտրւում են 8 տարով, ստորինը—5 տարով։ Փոխ-արքան նշանակւում է 6 տարով։ Ստեղծւում է Իրլանդիայի գաղտնի խորհուրդը իբր կատարողական մի մարմին, որը իրաք կը լինի փոխարքայի խորհուրդը։ Վեստմինստէրում (անգլիական պարլամէնտ) իրլանդացիք կ՝ունենան 81 պատգամաւոր, որոնք ձայն չեն ունենալ զուտ անգլիական խնդիրների քննութեան ժամանակ։ Իրլանդիայի ներկայ ոստիկանութիւնը կամաց-կամաց պէտք է վերացնի և փոխարինի իրլանդական կառավարութեան ոստիկանութիւնով։ Ընդհանուր պետական ծախքերում Իրլանդիան կը մասնակցի արդարութեան հիմունքների վրայ։ Գլադստոնի ճառը տևեց 2 ժամ, և վերջացաւ այս խօսքերով թէ՝ ներկայ օրէնքը կը զօրացնի պետութեան փառքը, զօրութիւնը և միութիւնը։

Z.